



## Փոքր երեխաների համար անվտանգությունն ու վնասվածքի կանխարգելումը հետևյալն է՝

- Երեխաներին անպայման մեծանալու և սովորելու ապահով վայր տրամադրել
- Երեխաներին վտանգներից պաշտպանել
- Երեխաներին սովորեցնել, թե ինչ պետք է անել անվտանգ լինելու համար

### Ինչու՞ է կարևոր այն

Երեխաները սիրում են հետազոտել, բայց կարիք ունեն՝

- Խաղալու համար անվտանգ վայրերի
- Չափահասների, ովքեր հետևում և լսում են, որպեսզի կարողանան վնասվածքը կանխարգելել նախքան պատահելը
- Նոր հմտությունները անվտանգ կիրառելու առիթների

Երբ երեխաները անվտանգ են, շատ ավելի հավանական է, որ՝

- Լինեն առանց վնասվածքի
- Կենտրոնանան սովորելու վրա
- Վստահությամբ նոր կացություններ հետազոտեն



## Բաներ, որոնք անելով կօգնեք ձեր երեխային

### • Տանը՝

- Բոլոր դեղերը, մաքրման և վնասակար արտադրանքները երեխաներից հեռու պահեք:
- Օգտագործեք պահարանների կողպեքներ և էլեկտրական կցորդիչների կափարիչներ:
- Օգտագործեք ապահովության դարպասներ աստիճանների վրա:
- Օգտագործեք անշարժ և ոչ թե ցածացող կողերով մանկական անկողիններ:
- Մանկական անկողինները հեռու պահեք լուսամուտներից և շերտավարագույրների պարաններից:
- Եթե հնարավոր է, լավագույնը կլինի օգտագործումը առանց պարանի լուսամուտի ծածկույթների: Այլապես, պարանները կապված պահեք բարձր, ձեր երեխայի հասողությունից դուրս:
- Մանկիկներին քնացրեք մանկական անկողնում պառկեցնելով կռակի վրա, առանց փափուկ

վերմակի, բարձի կամ թափարգելի:

- Երեխաներին հեռու պահեք տաք ուտելիքներից և հեղուկներից:
- Կաթասայիկների բռնակները դարձրեք դեպի սալօջախի հետևի կողմը:
- Ձեր ջրի ջեռուցիչի ջերմաչափի համար մի ընտրեք 120 աստիճանից ավելի:
- Երեխաներին հեռու պահեք ջեռուցիչներից կամ կրակներից:
- Ամեն հարկում տեղադրեք ծխորոշիչ սարքեր: Մարտկոցները փոխեք գարնան և աշնան:
- Եթե չունեք, ձեռք բերեք ածխածնի մենաթթուն հայտնաբերող սարք:
- Ձեր տեղի իրջեք կայանից ստուգեք, որ կարո՞ղ են օգնել, որ գտնեք ծխորոշիչ և ածխածնի մենաթթուն հայտնաբերող սարքեր:
- Ձեր մանկաբույժին հարց տվեք խեղդում պատճառող ուտելիքների և փոքր իրերի մասին:
- Կազմեք և կիրառեք փախուստի ծրագիր:

# Բաներ, որոնք անելով կօզնեք ձեր երեխային

Շարունակված Նախորդ Էջից

## • Դրսում


- Արևարգել օգտագործեք:
- Ձեր երեխային սովորեցրեք փողոցում չմնալ:
- Որոնք խաղավայրեր, որոնք հողի կամ խոտի փոխարեն ունեն փափուկ մակերես:
- Խաղավայրում ուշադիր հետևեք ձեր երեխային:
- Հագուստներից հեռացրեք ամրակապերը:
- Կոշիկակապերը պահեք կարծ և կապված:

## • Ջրի անվտանգություն

- Իմացեք, որ երեխան կարող է խեղդվել իր բերանն ու քիթը ծածկող քանակությամբ որևէ ջրի մեջ:
- Միշտ մնացեք ձեր երեխայից մեկ բազուկ հեռավորությամբ, եթե նա ջրի մեջ կամ ջրի մոտ է:
- Լողալ սովորեք և ձեր երեխային տարեք մասնագիտորեն վերահսկվող լողալու դասերի:
- Լողավազանների շուրջ օգտագործեք ինքնաբերաբար փակվող քառակողմ ցանկապատեր:
- Սովորեք սրտանոթային վերակենդանացումը (CPR):

## • Ավտոմեքենայի և բեռնատարի անվտանգություն

- Ընտրեք ձեր երեխայի տարիքին, հասակին և քաշին հարմար ավտոմեքենայի աթոռակ:
- Ընտրեք ձեր ավտոմեքենայում կամ բեռնատարում հարմարվող աթոռակ և միշտ օգտագործեք այն:
- Ձեր Head Start-ի անձնակազմին հարցրեք, թե որտեղ կարող եք գնալ ձեր համայնքում սովորելու համար, թե ինչպես ապահով կերպով պետք է տեղադրել ձեր երեխայի ավտոմեքենայի աթոռակը:
- 13 տարիքը չբոլորած երեխաներին միշտ նստեցրեք հետևի նստարանին:
- Ձեր երեխային երբեք ավտոմեքենայում մի թողնեք առանց չափահասի:
- Երեխաներին սովորեցրեք, որ մեքենաները խաղի համար միշտ վտանգ են ներկայացնում: Նույնիսկ եթե լուսամուտները բաց են, փոքր երեխաները կարող են վտանգավոր չափով չափից ավելի տաքանալ առաջին 10 րոպեում:



NATIONAL CENTER ON  
Early Childhood Health and Wellness